

կը գրէ թէ ան խիստ կառուցուածք մը ունէր: Շատերը, որոնց մէջ յայտնի հնախօս De Vogué և Cabrol, այս եկեղեցին կը չըփոթեն բուն իսկ Համբարձման եկեղեցւոյն (imbomon) հետ: Պորտոյի անանուն ուխտաւոր ուղեգիրը, որ 333ին, Հեղինէի այցելութենէն եօթն տարի վերջը, Երուսաղէմ այցելած էր, իր Ուղեգրութեան մէջ այս եկեղեցւոյ մասին չափ տեղեկութիւններ տալով կը գրէ. « . . . դուք երբ Զիթենեաց լեռը կ'ելէք, ա՛յն տեղը՝ ուր մեր Տէրը աշակերտները հրահանգեց, իր չարչարութիւններէն յառաջ, հիմնարկուած կը տեսնէք մայր եկեղեցի մը, կոստանդիանոսի հրամանաւ: Քիչ հեռի կը գտնուի բլրակ մը, ուր մեր Տէրը կը յաճախէր աղօթելու . . . »: Այս տողերը բացայայտօրէն կը յայտնեն թէ նոյն թուականին տակաւին չէր շինուած Համբարձման եկեղեցին, որ է, ըստ հայ ձեռագրաց, Բրիտի եկեղեցին: Այս վերջինը, Պետրոս վրացի եպիսկոպոսին ասորի կենսագրին համաձայն, կառուցուած է Դ. դարու վերջերը, նշանաւոր ծագումով, հարուստ և բարեպաշտօն Հռոմայեցի Տիկին մը, Բուսինի անուն. « ան կը սիրէր բնակիլ Ս. Տեղեաց մէջ, անոր հետեւած են մեծ և փոքր աշուճազգի Մելանիա բարեպաշտ երկու տիկինները: Բոմինիա շինած է Զիթենեաց լեռան Համբարձման եկեղեցին և յարակից շէնքերը»: Նոյն կենսագրին մէկ ուրիշ հաւուածէն կը հասկնուի նաև լեռան երկու եկեղեցեաց գոյութիւնը. « . . . Ան (Պետրոս վրացին) այն տեղէն գնաց Անդալուսի եկեղեցին, և յետոյ Գերսուսանի: Եւ երբ կը փափաքէր մերձակայ սրբավայրերն ալ այցելել՝ վեր ելաւ դէպի Աշակերտարանը և անկէջ ալ է Ս. Համբարձում եւ ապա ի Դազարիոն» (Pierre L'Iberien, Raabe, էջ 30): Զորրորդ դարէն շինուած և 1913ին Հռոմի եկեղեցիներէն միոյն մէջ գտնուած գեղեցիկ մոզայիք մը Զիթենեաց լեռան այս երկու եկեղեցիներն որոշ կերպով կը պատկերացնէ. (R. B. 1913, էջ 513-39): Երբ այդ երկու եկեղեցիներն արքայավայել ճոխութեամբ շինուեցան իրենց բոլոր մասերով, անոնց շուրջը բազմացան մենակեացներ և հաւատաւորներ, որ իրենց կարգին հետզհետէ հիմնեցին վանքեր եւ կոստանոցներ: Աշակերտարանի եւ Բրիտի եկեղեցիներն, է. դարէն սկսեալ՝ չմնացին միևնոյն վիճակի մէջ՝ այլեայլ դարուց մեծամեծ քանդումներուն հետեանքով: Ի ստորեւ կը պատկերացնենք անոնց վիճակը թուականի կարգաւ, և համառօտ նկարագրութեամբ: